ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 օգոստոսի 2020 թվականի N 187-Ա

«ԱՂԻՏՈՒԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2010թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ մասով, հիմք ընդունելով «Աղիտուի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի 2020 թվականի օգոստոսի 13-ի նիստի N 5 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի գրավոր եզրակացությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Աղիտուի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտրված տնօրեն Սուրեն Շահնազարյանի հետ 2020թ. օգոստոսի 20-ից կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

2. «Աղիտուի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Լուիզա Ղազարյանին 2020թ. օգոստոսի 20-ից ազատել տնօրենի պաշտոնակատարի պարտականությունների կատարումից:

19.08.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 19
ք. Կապան